Ս. Փրկիչ վանքին մէջ. իր տապանագիրն է հետևեալը. «Այս է տապան հանգստեան տեառն Յովհաննու վարդապետի Ստամպոլցւոյ, պատրիարքի Սրբոյ Աթոռոյս որ փոխեցաւ ի Քրիստոս ի թվին ՌՃԽԶ (= 1697) ամին, ընթերցողք յիշեցէք, և Աստուած ողորմի ասացէք. ամէն։»

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԵ. ՄՈՎՍԷՍԵԱՆ, ԶՄԻՒՌՆԻԱՑԻ.— (1850—1860). աշկ. Էտիրնէի առաջնորդ Մունճուսունցի Մեսրոպ եպսի որուն հետ 1819ին կ՚ուղևորի Ս. Էջմիածին։ Նոյն տարին կը միաբանակցի Ս. Յակոբի վանքին և Սեպտ. 14ին կը ձեռնադրուի աբ., Նե. Ատանայի 1823ին և Նիկոմիդիոյ (1828—29). Փկե. (1830—1841). իր փոխանորդութեան օրով կը վերաշինէ 1832ին հրդեհէն այրած Պոլսի Երուսաղէմատունը Ցարութիւն Գազազեան, Ճանիկ և Միխայէլ Փիշմիշեան ամիրաներու օժանդակութեամբ. հոս կը գտնենք նոյն շէնքին հիւրընկալութեան դահլիճին պատին վրայ զետեղուած հետևեալ արձանագրութիւնը.

«Յօղ գթութեան Փրկչին խնամոց
Ծաղկեալ լեցոյց Ս. Եկեղեցին։
Խամրեալ տնկոց որպէս աղբիւր,
Եւ Ցարութիւն յարութեամբն իւր։
Ցաւել ընդ նոյն զհոգի արի
Ոգել առնել միշտ զբարի
Հրեշտակ կոչեալ կցորդ շաւղաց
Երգէ ո՞վ է, որպէս Աստուած։
Զարդ ոսկեհուռ՝ եռահիւսակ.
Մեզ յԱստուծոյ՝ փառաց պսակ։
Ակնարկութեամբ՝ սոցին յաւէտ.
Ցարկըս չինի՝ վայելչակերտ,
Ցաջողութեամբ՝ Տեառն Արարչին.
Գեղեցկագոյն՝ քան զառաջինն։
Որպէս փիւնիկ՝ ծախեալ ի բոց.
Կանգնի նորոգ՝ յիւրոց մոխրոց։
Երուսաղէմ գերաշխարհիկ,
Ուր են բաղում ուխտատեղիք,
Անդ է վանք մեր՝ երկնահանգոյն.
Ս. Յակոբայ՝ Առաքելոյն։